

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ
ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԴԵՊՔԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Սույն պայմանագիրը վաղաժամկետ դադարում է հետևյալ դեպքերում՝

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և Պայմաններով նախատեսված այլ
դեպքերում:

2. Ապահովադրի՝ աշխատանքից ազատվելու դեպքում: Այս դեպքում ապահովագրողին
ներկայացվում է աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու վերաբերյալ փաստաթուղթ
և ապահովագրավճարը վճարած կազմակերպության կողմից դիմում դադարեցման
արդյունքում վերադարձվող վճարի վերադարձման մասին: Դադարեցման արդյունքում
վերադարձվող վճարը կարող է վճարվել միայն ապահովագրավճարը վճարած
կազմակերպությանը: Դադարեցման արդյունքում վերադարձվող վճարը հաշվարկվում է
սկզբնական ապահովագրավճարի չլրացած ժամկետի համամասնությունից 20 տոկոս
նվազեցմամբ, ընդ որում, 20 տոկոսը հաշվարկվում է սկզբնական ապահովագրավճարից:
Եթե տվյալ ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում տվյալ
պայմանագրի շրջանակներում տեղի է ունեցել ապահովագրական պատահար, որի
արդյունքում Ապահովագրողը վճարել է կամ պետք է վճարի ապահովագրական հատուցում,
ապա պայմանագրի դադարեցման դեպքում ապահովագրավճարը չի վերադարձվում:

3. Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարեցնելու դեպքում կողմերը
պարտավոր են այդ մասին ոչ ուշ քան 15 օր առաջ ծանուցել մյուս կողմին: